Դ· ՏԱՐԻ ԹԻՒ 1031 ՈՒՐԲԱԹ 12 ՅՈՒՆԻՍ 1887 (Ն· Տ·) 24 ՅՈՒՆԻՍ 1887 ՇԻՎՎԱԼ 1304

20 ՓԱՐԱ (ՄՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆԶ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան–խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ԿԱՏԱՐԱԾԱՒ ԱՆ ԱՋԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ՄՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆԵՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի· Պոյոյ Համար Տարեկան	դաշեկան արժէք	160
» » Վեցամսեայ	» »	80
» » Եռամսեայ	» »	40
Դաւառաց » եւ տեղական		
Թղթատարով տարեկան	» »	240
Դաւառաց Համար եւ տեղական		
Թղթատարով վեցամսեայ	» »	120
Օտար երկիրներ, տարեկան	ֆրանք	58
» » վեցամսեայ	»	26

Դրամս դրկուած յաղագս ձամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է։ Յայտնեցուածներ դրուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deirmen Hân Constantinople

Կ· ՊՈԼԻՍ, 12 ՅՈՒՆԻՍ, 1887

ԵՐԵԿԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

(ՅՈՒՆԻՍ 17ԷՆ ՄԻՆՉԵՒ 20 ՅՈՒՆԻՍ·)

Պէռլին, 18 յունիս·

Նո՛ւ կը հերքէ երից կայսերաց մօտալուտ տեսակցութեան նկատմամբ զրոյցները, և կը յարէ թէ պուլկարական խնդրոյն լուծման համար եղած նոր ձեռնարկներն ևս դատապարտեալ են անյաջողութեան, քանի որ խնամակալք և Տէրութիւնք, աւելի կամ նուազ հակառակելով Ռուսիոյ տեսութեանց, չեն ընդունիր Ռուսիոյ դրած անթոյլատրելի պայմանները·

—Պէռլին, 18 յունիս·

Ռայխսթակին նստաշրջանն այսօր վակեցաւ, յետ ընդունելութեան ամէն օրինագծերու, կայսերական հրամանագրով մը, որով Ն· Կ· Վեհափառութիւն ընդհակալութիւն կը յայտնէ ժողովոյն կատարած աշխատութեանց համար, որք Տէրութեան զինուորական և եկմական ոյժերուն տուին պէտք եղած հատատութիւնն ու տեսականութիւնն, որք էական պայման են խաղաղութեան պահպանման և խաղաղական աշխատութեանց զարգացման·

—Լոնտոն, 18 յունիս·

Ալպաս–Լաուենգոյ դատին մէջ վճիռ աջակից Բարձրագոյն Ատեանը, Քէօբլին մէկ տարի, պէռը և Շիֆմանըը երկու տարի և Դրոք մէկ ու կէս տարի բերդաբանգելութեան դատապարտեցան, և միւս չորս ամբաստանեալք անպարտ արձակեցան·

—Բէռլին, 18 յունիս·

Պաթսք կը հետագրուի թէ, մինչ 250 ուխտաւորք Դանուբէ կ'անցնէին, յանկարծ փոթորիկ մը ծագելով, չորեցան լաստերն որոց վրայ նստած էին, և ամենքն ալ ընկղմեցան· Արդէն 100 դիակներ ցամաք հանուած են·

—Բէռլին, 19 յունիս·

Պաթսք եկած նոր տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ Դանուբէ անցնող ուխտաւորք, որոց լաստերը չորեցան, 314 հոգի էին, որոց 127ն յայտնեցան գետեղերքն ելնել, և յս առաւօտ 101 դիակներ գտնուեցան, և ուրիշ 87 անձինք անյայտ են դեռ·

—Բէռլին, 19 յունիս·

Առասիկ երեսի· Փողովոյ ընտրութեանց արդիւնքը· 224 Ազատականք· 38 անդամք չափաւոր ընդդիմադիր կուսակցութեան· 50 անկախ անդամներ· 9 հակահրէական անդամք· 5 անդամք որք ո՛չ մէկ կուսակցութեան կը վերաբերին·

—Սթոքհոլմ, 19 յունիս·

Պատերազմական նախարարն հրաժարական տուաւ· զի Շուէտական Խորհրդարանը մերժեց 150,000 թուրոնի վարկը, զոր կառավարութիւնը կը խնդրէ գործադրելու համար երկրին զինուորական պաշտպանութեան վերաբերեալ նոր օրէնքը·

—Պուդա, 20 յունիս·

Պ· Սգոլով, Սոֆիա վերադառնալու համար Պելկրատէ անցնելով, երկար տեսակցութիւն մ'ունեցաւ Պ· Ռիսդիչի հետ, որ յայտարարեց թէ ճշդիւ պիտի պահէ բարեկամական յարաբերութիւնները որք հաստատած են Սերպիոյ և Պուլկարիոյ միջեւ· Պ· Ռիսդիչ յարեց որ եթէ երկուց երկրաց յարաբերութիւնք արդէն բարւոքած չլինէին, ինքն իսկ պիտի ստանձնէր առնոց բարւոքման նախաձեռնութիւնը· Պ· Սգոլով չատ գոհ մնաց Սերպիոյ նոր նախարարապետին հետ տեսակցութենէն·

—Պուդա, 20 յունիս·

Աբմետական մամուլը կը հերքէ այն զրոյցները թէ նախարարական փոփոխման միջոցին տեղի ունեցած ցոյցերուն հեղինակներն Աւստրիոյ–Հունգարիոյ դէմ նախատալից աղաղակներ արձակեր են·

—Պեռլին, 21 յունիս·

Դուշըոբ կը ծանուցանէ թէ «ո՛չ ևս երկբայելի է որ Սերպիոյ Միլան թագաւորին և Նաթալի թագուհւոյն ամուսնալուծումը պիտի վճռուի առանց կարկուտութեամբ Թագաւորին, և Պ· Ռիսդիչ նախարարապետ կարգուած է, զի նա՛ միայն պատրաստութիւն կը ցուցընէր այս մասին պէտք եղած բանակցութեանց ձեռնարկելու·»

—Պեռլին, 21 յունիս·

Վիլհելմ կայսեր երեւելագոյն ախտանշանն այն է որ ոյժերն յոյժ դանդաղօրէն կ'աւելնան, որով իւր ուղեւորութեան բոլոր խորհուրդներն ի բաց Թողուլ հարկադրեցաւ·

—Լոնտոն, 29 յունիս·

Տէյլ Նէուզին Օտեսայի Թղթակիցը կը հետագրէ թէ անգրկասպեան (Կեդր· Ասիոյ) երկաթուղւոյն բոլոր կայարանաց մէջ մեծ գործունէութիւն կայ, Հրամատարը ստացած են կամ կ'ըսպասեն յառաջխազացութեան հրամանները· Տէյլ Նէուզի Թղթակիցը կը հետագրէ նաեւ թէ ռուսական իշխանութիւնը Թոլտուտիւն չին ըներ օտարազգաց՝ ռուսական ազդային ուղիներէն անցնելով Օմ· Հայաստան մտնելու·

—Վիէննա, 20 յունիս·

Մաճառական ընտրութեանց առթիւ, Սէբտահելի հրէական գիւղին միանդամայն երիք կողմէ կրակ տրուեցաւ, և 80 հրեայ ընտանիքներ իրենց կեանքը միայն կրցին ազատել·

—Պեռլին, 20 յունիս·

Երկիկ իրիկուն Բոճամէ եկող կառախումբ մը բախեցաւ ուրիշ կառախմբի մը· չորեքարժ մը տապալեցաւ, և չորեակառք մը հրկիզեցաւ· Երկու մարդիկ մեռան և եօթն անձինք վիրաւորեցան·

—Մոֆէ, 20 յունիս·

Պատերազմական նախարար Գնդապետ Նիքոլայեվ կանխեց իր ուղեւորութիւնն ի Դրնովա, գաւառին այլ և այլ պահապան զօրքերն աչքէ անցուելու համար· Պ· Սգոլով ապաքինեցաւ կատարելապէս, և չորեքշաբթի Դրնովա կ'երթայ, ներկայ գրնալ Մեծ Սոպրանչէին բացման·—Դատական նախարար Պ· Սգոլով, որ վիէննա կը գտնուէր, վերադարձաւ Սոֆիա, Մեծ Սոպրանչէին բացման առթիւ·

—Պեռլին, 20 յունիս·

Նոր Տեղեկ Ագենտ Զայտանի, Ռայխսթագի վերջին նստաշրջանին վրայ խօսելով, կ'ըսէ թէ 1887 տարին չարագուշակ նշաններով սկսած էր, բայց Գերմանիոյ պաշտպանողական ոյժերուն յաւելման չնորհիւ, խաղաղութիւնն այժմ ապահովեալ է քանի մը տարիներու համար·

—Հռոմ, 20 յունիս·

Իտալեան Կառավարութիւնն երէկ ծանոյց ֆրանսական Կառավարութեան թէ պաշտօնապէս չպիտի մասնակցի Բարիզի Տիեզերական Արուեստահանդէսին, իբրեն յատուկ դրամական պատճառներով·

—Բուդապէշ, 21 յունիս·

Ռուս Կառավարութիւնն հրամայեց անմիջական կազմութիւնն ոստիկանութեան հինգ նոր զօրագնդոց, որք ապատրոնաժական սահմանաց վրայ պահպանութիւն ընել պիտի կոչուին·

—Լոնտոն, 20 յունիս·

Վիքտորիա Թագուհւոյն Ուխտատեղ հասաւ· Ամբոխը խանդավառ աղաղակներով ընդունեց զնա· Միլիոն մը այցելուք եկած են Լոնտոն, դիտելու Յոբելեանի հանդէսը·

—Պեռլին, 18 յունիս·

Կը ծանուցուի թէ Ռուսաստանը և Թուրք զօրքեր (՞) նոր արշաւանքներ ըրած են սերպական հողին վրայ· Տոպչինովի դիւղացիք ոմանք սպանուեր են, մինչ կառավարութիւնը դանգատեցաւ Բ· Դրան·

—Վիէննա, 17 յունիս·

Բուբափեշտոն Բիւրէօ կը հաստատէ թէ Պ· Կիրսի գերքն երբեք աւելի զօրաւոր չէր եղած քան այժմ, այնպէս որ Պ· Կիրս Զաբլին կատարեալ վստահութիւնը կը վայելէ·

—Մադրիտ, 17 յունիս·

Զ'պաղէն սպաննել փորձող ֆրանսացի Լուի Հիլէռոյի գործին դատական քննութիւնը վերջացաւ· Ընդհանուր դատախազը կը յայտարարէ թէ այս մարդ սպանութեան փորձ մը փորձած է, կանխամտածութեամբ և թակարդ լարելով, որք ծանրացուցիչ պարագաներ են· Կը պահանջէ ուրեմն որ ամբաստանեալը տասն և հինգ տարի չղրթայակապ աշխատութեան դատապարտի· Դատն երեք չաբաթէն պիտի սկսի· Լուի Հիլէռոյի փաստաբանն ի մէջ պիտի բերէ ամբաստանելոյն անպատասխանատուութիւնը, քանի որ անոր մտային կարողութիւնը խանգարեալ են, և պիտի ապացուցանէ թէ հարուածները ուղղ և վերք պատճառելու հասարակ յանցանք մ'է այս, որուն հետեւանօք Պազէն 48 ժամու չափ իսկ աշխատութեան անկարող չէ եղած·

—Բիէթրոպօրն, 18 յունիս·

Նէյչէ Վէլթ, խօսելով Ալդաս–Լոռէնի մէջ Գերմանիոյ ձեռք առած նոր միջոցներուն վրայ, կ'ըսէ թէ Գերմանք անշուշտ անկարող են զսպել Ֆրանսայի ոգեաժամբ համակրանաց արտաքին ցոյցերը, բայց չեն կրնար չընդել այս համակրանքներ, որք հիմնեալ են ա՛չ թէ Ալզաս–Լոռէնցւոյ մը Ֆրանսայի բազաքացի կոչուելու փափաքին վրայ, այլ նոյն իսկ Ալզաս–Լոռէնի տնտեսական վիճակին վրայ, որ, 1870էն առաջ հարուստ, այժմ հետզհետէ կ'աղքատանայ, Բրուսիացւոց եւ այլ բախտակիցներ Գերմանաց չհաղթուելական ասպարէզ դառնալով·

—Պէռլին, 18 յունիս·

Նո՛ւ կ'ըսէ թէ Սերպիոյ մէջ ազգային կուսակցութեան յիշատութիւն անցնելուին Ազատականք վրէժ լուծած են Պ· Կարաչանիէ, որ կը մխեր Աւստրիոյ Թեւարկութեան ենթարկեալ թագաւորութիւն մ'ընել զՍերպիա· Այս յեղաշրջում ցոյց կուտայ պալքանեան երկրաց մէջ գիւանագիտական խորախորհուրդ մրքնայութեանց ամրութիւնն· Ասկէ հանուելիք դասքն այն է թէ Պալքանեան Պետութիւնք պէտք է զգուշանան օտար Տէրութեանց հակընդդէմ չահերուն գործիք լինելէ·

—Թուռնոն, 19 յունիս·

Թուռնոնի Պետութեան այլ և այլ կողմերը կատարուած պեղումներէն արտադրեցին չատ մը Թանկագին հնութիւններ, Տապկներ, անօթներ և արձաններ, որք պիտի դիտուին Պատոլի Հնութեանց Թանգարանին մէջ, հաստատեալ Պէչին կանոնագրին մէջ·

—Վիէննա, 18 յունիս·

Պ· Ռիսդիչ, իւր կուսակցութեան ազդեցիկ անդամոց հետ խօսակցելով, ծանոյց թէ, ընտրութիւններէն անմիջապէս ետքը, նորակազմ Սրբուիչներն պիտի առաջարկէ Սահմանադրութեան վերաքննութիւնը·

—Նախարարական հրամանագիր մը պաշտօնական կ'ընէ Բուլղարիոյ (Պալդիկեան գաւառք Ռուսիոյ) Միւդաքաքաքին դատարանին նախագահն և անդամները, որք կը չարունակեն գերմաներէն գործածել փոխանակ ռուսերէնի, ըստ նոր Ուխտին·

—Ռուսիոյ Սէվիրչէնեք գաւառին մէջ, և մանաւանդ գաւառագլուխ Վչերնօէ քաղաքին մէջ, երկրաշարժներ տեղի ունեցան, և ցարդ 140 դիակներ հանուեցան փլատակներուն տակէն· Շատեր ալ վիրաւորեցան· Աւելորդ է ըսել թէ նիւթական վնասներն չատ մեծ են· Բեռլրսպուրկի ֆրանսական հիւպատոսին հրաւիրմամբ, Ֆրանսացիք հանգանակութիւն մը կը բանան, ինչան համակրանաց առ ռուս ժողովուրդն·

Իտալական ֆինհանսներու կամ Ցազգատնտեսականներու ի Բարիզ դանուող պետերէն մին, Պ· Բադրիք Գաղի, հետեւեալ հետաքրքրաշարժ խօսքերն ըսեր է Լոնտոնի լրագրոյ մը Բարիզեան Թղթակցին, ֆինհանսներուն դատադրական խորհրդոյ նկատմամբ·

«Հաւանական է որ բան մը պատահի, և մօտ օրէն, բայց Թուականը չեմ կրնար ըսել· Ինչ որ ալ լինի, մարդկային կեանքը խնայելու համար սովորական յեղաշրջման վրայ·

Ուշագրութիւն դրաւած է թէ Գերմանիոյ կառավարական մամուլը, մանաւանդ նոյն Տեղեկ Ագենտ Զայտանի, առաւելապէս նպաստաւոր լուսաբանեցաւ Սերպիոյ ռուսասէր նոր նախարարութեան կազմութեան վրայ, որ յայտնի Աւստրիոյ կողմ պաշտպանեալ Պ· Կարաչանիէի նախարարութեան, կ'ըսուի մինչեւ իսկ թէ դրսեան կառավարութիւնը բոլորովին անմասն չէ Սերպիոյ սոյն քաղաքական յեղաշրջման մէջ· Վերջէն Զայտանի հաստատելով զայս, կը ծանուցանէ թէ Պելկրատի գերման դեսպան Պրէյ Կոմսին խորհրդոյ հետեւելով է որ Միլան Թագաւոր յանձն առած է յիշեալ նութիւն վերակոչել զՊ· Ռիսդիչ· Կ'երեւի ուրեմն թէ Գերմանիա ուզած է ի միասս Աւստրիոյ ծառայութիւն մ'ընել Ռուսիոյ, Զարին պաչքանեան աչխարհաւարութեան տակ երեւելի յայտնութիւն մը, որ բնաւ չի զպչիր Գերմանիոյ բազաքական եւ այլ չահերուն·

Պադէնեան Հրդեհին նկատմամբ Պուքրեչէ կը հետագրուի յունիս 18 ին·

«Կարոյ Թագաւորն արդէն տուաւ 10,000 ֆր· իւր անձնական բաղկէն ի նպաստ հրկիզելոց Պադէնեանի, և տեղւոյն քաղաքապետին նամակ մ'ուղղելով, ծանոյց թէ հանգանակութիւն բացուած է, և առաջին առորագրողք են Թագաւորն ու Թագուհին· Մանախմբեր կազմուեցան նպաստ հաւաքելու, Վնասներն անհուն են· Պադէնեան — ախորժանքն ըսել ամբողջ Հրդ հոգի եղած է, Շատ մ'ընտանիքներ անպատսպար մնացած ևն, Հրկիզեալ հաղարի չափ տուներէն 170ը միայն ապահովագրեալ էին,

Ա՛յս պայմանաց մէջ, անհրկեալին կը թուի մեզ թէ Պադէնեան հրդեհէն տեղւոյն հայ գաղթականութիւնն ևս ծանրապէս ղեաստած պէտք է լինի·

Սլաւական «Բարեսիրական» Ընկերութիւնն հետագիր մը դրկելով առ Պ· Ռիսդիչ, ջերմ խնդակցութիւն յայտնեց նոր յիշատութիւն անցնելուն համար·

Ռուսիոյ լրագրութիւնք միահամուռ բերկրութիւն կը յայտնէ Սերպիոյ ռուսասիրական յեղաշրջման վրայ·

ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ԻՒՐ ԸՆՏԱՆԻՔ

Նորին Վեհափառութիւն Վիքտորիա Թագուհին ծնեալ է 24 մայիս 1819, և 1837 յ·–ունիս 20 ին իւր հօրեղբայր Ուիլիըմ (Գուլիէլմոս) Դ· Թագաւորին յաջորդեց, ու 1840, 10 փետրուարին Սաքս Քոպուրկ Կոթայի Ալպէրթի Իշխանին հետ կարգուեցաւ, որ մեռաւ ի 14 դեկտ· 1861·

Արդ, Անգլիոյ Թագուհիէն այժմ վեմ տարի է, և ամսոյս 20 ին 50 տարի պիտի լինի որ կը Թագաւորէ· Ա֊յսպիսի յիսնամեայ տարեդարձները խիստ հազուագիւտ են, քանզի միայն երեք Թագաւոր Անգլիոյ կարող եղած են իրենց յիսնամեայ Թագաւորութեան տարեդարձը տօնել, որք են Հենրիկոս Դ· 1266 ին, Եդուարդ Դ· 1377 ին և Գէորգ Դ· 1810 ին·

Անգլիոյ Թագուհին Ալպէրթ Իշխանին հետ ամուսնանալով ունեցաւ ինն զաւակ, որոց երկուքը մեռան, որք են Ալիս Իշխանուհին 1878 ին և Ալպանի Դուքսը 1884 ին·

Միայն Լուիզ Իշխանուհին, որ Մարքի Տը Լօրմին հետ ամուսնացած է, զաւակ չունի·

Ա֊ջխինակը, Վիքտորիա Իշխանուհին, որ Գերմանիոյ կայսերազուն Իշխանին հետ ամուսնացած է, ունի երկու մանչ զաւակ և չորս աղջիկ·

Կալլէսի Իշխանն, որ Տանիմարքայի Ալէքսանդրա Իշխանուհւոյն հետ ամուսնացած է, ունի երկու մանչ զաւակ և երիք աղջիկ·

Էմիմպուրկի Դուքսն, որ արդի Զարին քրոջ հետ ամուսնացած է, ունի մէկ մանչ զաւակ և չորս աղջիկ·

Ալիս Իշխանուհին, որ Հէսի Մեծ–Դքսին հետ կարգուած էր, մէկ մանչ և չորս աղջիկ Թողուց·

Հելլէն Իշխանուհին, որ Շլէզվիկ Հոլշտայնի Ֆրէտէրիք Քրիսթիան Իշխանին հետ կարգուած է, ունի երկու մանչ և չորս աղջիկ·

Քոննաուրթի Դուքսն, որ Բրունսիոյ Մարգրիտ Իշխանուհւոյն հետ կարգուած է, ունի մէկ մանչ և երկու աղջիկ·

Ալպանիի Դուքսն, որ Հէլլէն տը Վալդէք Իշխանուհւոյն հետ կարգուած էր, Թողուց մէկ մանչ և մէկ աղջիկ·

Վերջապէս Պէաթրիս, որ վերջերս Պադէնպէրկի Հէնրի Իշխանին հետ կարգուեցաւ, արդէն մանչ զաւակ մը ունի·

Եթէ իւր յիսնամեայ տարեդարձին առթիւ Թագուհին ուզէր բոլոր իւր զաւակներն ու Թոռները իւր մեղանն հրաւիրել պէտք էր քառասուն երկու հոգւոյ սեղան սպաս դնել·

Թագուհին տարեկան կ'ընդունի	ֆր.
	9,625,000
Կալլէսի Իշխանն, իւր յաջորդ	1,000,000
Կալլէսի Իշխանուհին	250,000
Բրունսիոյ Իշխանուհին	200,000
Էմիմպուրկի Դուքսը	625,000
Քրիսթիան Իշխանուհին	150,000
Քոննաուրթի Դուքսը	625,000
Պէատրիս Իշխանուհին	150,000
Ալպանի Դքսուհին	150,000
	12,925,000

Ասկէ զատ, Թագուհին Լանքաստըրի Դքսութենէն մէկ ու կէս միլիոն ֆրանք կ'ստանայ, ու Կալլէսի Իշխանը Բօրնհոլմի Դքսութենէն երկու միլիոն ֆրանք·

—)(11)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ՕԳՈՒՍՏ ՖԷՕՅԵ

(ԱՆԴԱՄ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ)

ՏԱՐՓԱՆՔ ՖԻԼԻԲԻ

—Տէր իմ, ըսաւ ; չատ լաւ մտածեր էք դալ հոս բնակիլ··· Ձկնարիտ գրախտ մ'է, տէր իմ, չատ հանդիստ գրախտ մը·

—Լա՛ւ, գացէք, ըսաւ Ֆիլիբ·

Իր սենեակը մտնելուն պէս թաղեցի մը վրայ նետուեցաւ, մարմինը պարտասած, միաքն ու սիրտը խռովքատանջ, իւր տարիքին ու հոգւոյն բոլոր եռանդներամբ զգալով հմայաթափութեան, նուաստացման, մտատանջութեան բոլոր անձկութիւններն, եւ ամէն բանէ աւելի բոլոր կսկիծներն այն խոր վշտին զոր կը պատճառէ պարտեցեալ էակի մը արհամարհանքը·

Շատ ուշ էր, էլս գիշերն երիւ ժամ անցած, երբ յանկարծ մտախոհութենէն արթնցաւ ցած ձայնով վիճաբանութեան մը չչուկէն որ կարծես սանուցին անդամակէն կուգար· յետոյ լռութիւն տիրեց, եւ կարծեց լսել քայլերու թեթեւ խօչիւն մը գորգին վրայ· Դուռը բացուեցաւ· Ֆիլիբ ոտք եւլաւ, ամրացան վրդոված, որ հանգիս նչմարեց կնոջ մը մութ ուրուականը· Միեւնոյն րոպէին, երիտասարդը դեռ ինքզինքը չժողված, Մաաի Թէռալտ իւր առջեւ ծունր դրած էր, աչերը վեր յառած, ձեռներն իրար միացուցած, եւ ժպիտ ի չուրթին կ'լսեր իրեն·

—Աւետի՛ս եմ·

Գ·

Մաաի Թէռալտ այն կիներէն չէր որոցմէ մարդ կը բաժնուի անդամ մը որ տիրացած է· Անձամբ չատ հրապուրիչ եւ կարի այրական էր· իւր արուեստին ու տօնդանին չնորհիւ այնքան փաղաքուչներ ունէր չորս դին որ կրնար միւս արմուն, միւս հիացեալ, միւս խռով պահել սիրահարի մը սիրտը· Որքան ալ անձնամատոյց եղած լինէր ամբողջովին, ի տրժեալ այն դերասանուհիին իր զոր հաստարակութիւնը ցնծութեամբ կ'ընդունէր ամէն իրիկուն, իւր աչխարհաքաղաքացի պաշտողներու խումբը կը գգուէր կը փայփայէր ամէն օր· Ա֊յս վերջինը չատով սոմրած էին Էնվալիտի պղտոցային ճամբան եւ միջնէի պէս հոն թափած էլն· Ֆիլիբի համար անդ անպակաս էին ասպետութիւն, խելք, կասիած, որք կը խանգէին իւր սիրան, այլ հանապազ կը հրահրէին զինքն եւ անշէջ կը պահէին իւր բոցը·

Մաաի Թէռալտ եւս իւր պատքած սիրտը կը կապուրէր հետզհետէ այդ մտաղուս սիրտ թարմ ու վճիտ աղբիւրին· Ուռանդաղին յարած էր այդ սիրուն հովուհարգութեան· Իւր դերը մը խաղար այնքան անկեղծութեամբ օրքան Ֆիլիբ, եւ տասն հինգ օր յետոյ վերստին կը դտնենք երկուքն ալ մինչ համախորհուրդ կ'երազեն մտնջեւանուել իրենց կենաց այդ բանաստեղծական դրուագը·

Նախաճաչն առարած էին եւ պարտիղին մէջ կը պտտէին գեղազարդ առուտուր մը, —որովհետեւ ամէն ինչ ժպտուն երես մը ցոյց կուտար իրենց, մինչեւ իսկ դարունն, որ այդ տարի կ'արժանանար իւր հին համբաւոյն, որուն դէմ այնքան չատ մեզանչած է· Մաաի Թէռալտ, տպլիչն անդիչն մրոցնելով կանաչ ծիլեր զոր կը խածատէր բարակ ակալներովը, Ֆիլիբի կը հաղորդէր իւր ապագայ ծրագիրները գորովալիր խանդարհ ձայնով մը որ ամենէն չնորհալի պչրողութիւնն էր գեղանի եւ անուանի դերասանուհւոյն համար·

—Ես կ'երդնո՞ւք ինձմէ զատ ուրիշի համար թատերախաղ չդրե՛ք·

—Կ'երդնում·

—Նոյն իսկ եթէ բոլորովին մեծ մարդ մը լինի՛ք·

—Ո՛չ երբ պատուբեամ, ալ թատերախաղ չը՛ պիտի գրէք·

—Բնա՛ւ, բնա՛ւ·

—Ո՛չ ումեք համար·

—Ոչ ումեք համար·

—Ու այն ատեն զի՞ւղ պիտի քաչուինք·

—Չիմա իսկ, եթէ կ'ուզէք·

—Ո՛չ··· սակայն կեցէ՛ք բան մը ըսեմ ձեր ականջէն վար··· Կը սիրե՛մ զձեզ·

Մինչ այսպէս զերասանուհին կը ճառուղեր մանկան մը հանդոյն, Ֆիլիբի երիտասարդ ոտատուորն յանկարծ իրենց դէմն եւլաւ խռովուն դէմքով·

—Տէր իմ, ըսաւ չնչասպառ, ձեր հայրը եկաւ·

—Հա՛յրս, ըսաւ Ֆիլիբ որ անիկայնէս մտերի զայն ատաւ·

Ա֊յս միջադէպ, զոր այնքան դիւրին էր գուշակել եւ զոր Ֆիլիբ կանխելու էր հօրը վերջին նամակով մէկ քանի խօսքերէն, գերբնական ազէտի մը պէս սարսեց զնա· Մաաի Թէռալտ ընդհակառակն բաւական հրճուեցաւ ի սրտէ, որովհետեւ այս պատահարն իրեն կը յիչեցնէր Գաչէնպէրգ Տիկնոջ մէջ հօրը ներս մտնելն եւ պատկառ մը չէր թողուր իրենց տարիմանաց մէջ·

—Տէր իմ, ըսաւ Ֆիլիբ որ անիկայնէս մտերի զայն ատաւ·

Ա֊յս միջադէպ, զոր այնքան դիւրին էր գուշակել եւ զոր Ֆիլիբ կանխելու էր հօրը վերջին նամակով մէկ քանի խօսքերէն, գերբնական ազէտի մը պէս սարսեց զնա· Մաաի Թէռալտ ընդհակառակն բաւական հրճուեցաւ ի սրտէ, որովհետեւ այս պատահարն իրեն կը յիչեցնէր Գաչէնպէրգ Տիկնոջ մէջ հօրը ներս մտնելն եւ պատկառ մը չէր թողուր իրենց տարիմանաց մէջ·

—Տէր իմ, ըսաւ չնչասպառ, ձեր հայրը եկաւ·

—Հա՛յրս

ՄՇԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԱՆՈՅ

Տարեկան բաժանորդագին Ռուսաստանի մէջ 5 ռուբլի արծաթ, կէս տարուան 2 ռ. 50 կ. Արտասահման տարեկան 6 ռուբլի, կէս տարուան 3 ռ. Առանձին համար 5 կոպէկ։ Հին համարներ 10 կոպէկ։ Բաժանորդագինը կանխիկ կը վճարուի։ Հասցէ՝ Տփղիս, Ռեդակցիա «Մշակի»։ Ռեդակտոր-հրատարակիչ Ս. Ա. Լալայեան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԻ ՆԱՀԱՊԵՏ ՍՈՒՐԵՆԱՅԻ ՏԷՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԱՌ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՍ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Ա

Ի՞նչ է Հայաստանի հարցը։ Ինչո՞ւ համար այդ հարցը կայ։ Ինչո՞ւ համար Հայաստանի հարցի մասին կը խօսուի ամէն տեղ, ամէն առիթով, ամէն ատեն։ Ինչո՞ւ համար Հայաստանի հարցը կը հետաքրքրէ ամբողջ քաղաքակրթեալ աշխարհը։ Ինչո՞ւ համար Հայաստանի հարցը կը հետաքրքրէ նաեւ Հայաստանի մէջ չապրող հայերը։ Ինչո՞ւ համար Հայաստանի հարցը կը հետաքրքրէ նաեւ Հայաստանի մէջ չապրող հայերը։ Ինչո՞ւ համար Հայաստանի հարցը կը հետաքրքրէ նաեւ Հայաստանի մէջ չապրող հայերը։

Ահա այս հարցերուն պատասխանելու համար պէտք է ուսումնասիրել Հայաստանի հարցի պատմութիւնը։ Հայաստանի հարցի պատմութիւնը ուսումնասիրելու համար պէտք է ուսումնասիրել Հայաստանի հարցի պատմութիւնը։ Հայաստանի հարցի պատմութիւնը ուսումնասիրելու համար պէտք է ուսումնասիրել Հայաստանի հարցի պատմութիւնը։

Հայաստանի հարցի պատմութիւնը ուսումնասիր

ՄԱՇՏՈՑ, 26 մայիս

ՆԵՐՔԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Ցանկանալով հնարավորինս շուտ հրատարակել Ներքին Մատենաշարակարգի առաջին հատորները, Մատենադարանը հրավիրում է բոլոր հետաքրքրվողներին ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին։

Ներքին Մատենաշարակարգի առաջին հատորները կազմելու համար Մատենադարանը ձեռնամուխ է եղել դեռևս 1913 թվականին։

ՀԱՅԱԼԱՏ

ՕՐԱԹԵՐԹ ԱՄՍԱԳԻՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԹՈՂԹԱՏԵՐ ՀԱՅ ԱՂՋԻՔԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱԼԱՏ

ՀԱՅ ԱՂՋԻՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹՈՂԹԱՏԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅԱԼԱՏԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԼԱՏԻ

ՀԱՍՑԵ՝ ՊՈՒՅԼՎԱՐ ՍԱՐԻ ԱՌՋԻՆ ԹԻՎ 1

ՀԱՅԱԼԱՏԻ ՀԱՍՑԵՆ ՄԻՆՉԵՒ ՀԻՄԱ ՄԱՐՏԻ ԱՌՋԻՆ ԹՈՒՆԵՐՈՒՆ ԿԸ ՄՆԱՅ ՄԻԱՅՆ ՀԱՅԱԼԱՏԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԻԱՅՆ ՀԱՅԱԼԱՏԻ ՀԱՄԱՐ